600.0254.22.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2020 թվականի №254Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի №413Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի հուլիսի 20-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «ԷԿՈՆՈՄԻՆԿԱՍԱՑԻԱ» դուստր փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №ԳՌՑ-0329 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №413Ա որոշմամբ (այսուհետ՝ №413Ա որոշում) երկարաձգված և նոր խմբագրությամբ շարադրված ու 2016 թվականի փետրվարի 3-ի №16Ա որոշմամբ «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերության անվամբ վերաձևա-կերպված ռադիոհաճախակա-նության օգտագործման №0817 թույլտվության գործողության ժամկետը՝ №413Ա որոշման 1-ին կետում «2010 թվականի հուլիսի 28-ից տասը տարով» բառերը փոխարինելով «մինչև 2030 թվականի հուլիսի 28-ը» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
22 հուլիսի 2020թ.